# ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

## ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ. – Ի Ս. ՂԱԶԱՐ

(*Շար. տես թագմ.* 1925, *էջ* 93)


## ՃԺԱ.

*Թանկագին ու կարեւորագոյն նամակներուն շարքը առաջ կը տանի Յովհաննէս պատկերահան, հետզհետէ տալով Հռոմէն մանրամասն տեղեկութիւններ՝ հոն ժամանող Պետրոս կաթողիկոսին նկատմամբ։*

*Նախ կը հաղորդէ ինչ որ կրցեր է իմանալ կաթողիկոսական անդրանիկ ընտրութեան և անոր յարակից դէպքերուն շուրջ, ապա կը նշանակէ Հռոմ ուղեւորուելուն շարժառիթը, նպատակն ու գտած սիրալիր ընդունելութիւնները թէ՛ Քահանայապետէն[1] և թէ Ծիրանաւորներէն։*

*Մեր վաւերաթուղթը բացառիկ կարեւորութիւն մ'ալ կը ստանայ, որովհետեւ հայ եկեղեցական պատմութեան կ'ընծայէ նշանակելի հետաքրքրական դէպք մը։ Քահանայապետական ունկնդրութենէն քանի մ'օր վերջ կը տկարանայ Աբրահամ կաթողիկոս. հիւանդութեան լուրը կը հասնի Սրբազան Հօր, որ այցելութեան կը փութայ երկու Ծիրանաւորներով միասին։ Առաքելական պալատ դառնալէ վերջն ալ՝ ի նշան հայրական հոգածութեան՝ առանձին հրահանգ մը կու տայ հիւանդին մասին։*

*Աբրահամ կաթողիկոս այն ինչ կը գտնէ առողջութիւնը՝ մասնաւոր ունկնդրութեամբ մը անձամբ կը ներկայացնէ երախտագիտական զգացումները։*

*Գերյարգելի եւ գերապատուելի տէրութեան ձեռում յոյժ սիրով եւ կարօտիւ ողջոյն*

*. . . Այն զօր խոստացայ այլ գրովս թէ ծանուցից գերյարգելութեան ձերում, վասն այս Պատրիարքի կողմանէ ներկայ գրովս կատարեցից և է այսպէս. սա քան զի տարի առաջ ֆէրմանով սուրկուն էին առած երուսաղէմ, սա կերպիւ փող կերցուցեր փաշային և փախեր էր ի լիփանան, և անդ մոտ ի տարի կենալուն եւս հալպու ուղղափառներն ֆէրման հաներ են ըթլախ այս պատճառելով թէ հալպու այէլէթն բազում փող առնելուք ունի երթայ ժողովէ. սա գնացեալ հալապ երկու ուղղափառ եպիսկոպոսի վէքիլներու ներկայութեամբ տէր մարքարն տէր ակոբն և տէր սահակն եպիսկոպոս օծեր է մինն տիարպէքիրի, տէր ակոբն հալպու, և տէր սահակն քիլիսիու վրայ. եւոյ այս վերոյ յիշեցեալ Գ եպիսկոպոսն զինքն կիլիկիայու վերայ պատրիարք օծած են, եւ այս առնելոյն... Բ ֆռանչիսկան պատրիի ներկայութեամբ, հանդերձ ուղղափառներու իշխաններովն ժողովք առարեալ են, թէ Պատրիարքն ընդ իւր սահակ եպիսկոպոսն Հռոմ գան, Պատրիարքն վասն խնդրելոյ փալիէն զհաստատութն և զփալեօն. եւոյ խնդրէ փալիէն և ժողովքեն բազում գրերս, որով Սահակ եպիսկոպոսն գնայ բովանդակ քրիստոնէից երկիրն*

---

1. Բենեդիկտոս ԺԴ.

digitised by A.R.A.R.@

*երկիրն ողորմութիւն ժողվելու. եւոյ այս ողորմութիւնն Գ բաժին անեն, Բ.ըն հալպու եկեղեցնայ և խեղճ ուղղափառներու օգնութիւն, մինն վասն լիփանանու եղած վանքին, և չորրորդ բաժինն պատրիարքին, և սոյն խորհրդովս ճանապարհորդ եղեալ հանդերձ բազում յանձնա[րա]րական գրերովն հասին տեղս։ Նախ քան զայս երբ մարսիլիայ հասին գրած են մառօնոց ոմանց թէ իրեանց տեղ պատրաստիցեն, բայց երբ ալիկուռնայ հասին՝ իմացած և տեղեկացած որ յաժմս ոչ քոյ խառվութիւն հայոց հիւրանոցն, այլ բնակիչքն կեան խաղաղութեամբ և միաբանութեամբ, գրեցին Վրդանէս եպիսկոպոսին և եկին տեղս.... Ուրեմն եւ տեղս հասանելոյ Նախ իւր գրերն ուղարկեց զանազան կարտինալներու, եւոյ ինքն անձամբ գնաց բարևելոյ զնոսա. յոյժ սիրով ընկալան զնա, եւ առաւել ըսպանեօլ քարտինալ պէլլուքան, որ մեծաւ յարգութեամբ սեղան կոչեց իւր պալատն զսա, ... [Յ]ետ կարտինալներու՝ փափին մօտ գնաց և փափն յոյժ սիրով ընկալաւ զնա, երբ լսեց իւրեանէ թէ ոպէս սուրբ Գրիգոր Պատրիարքն Հայոց ի ժամանակի սուրբ Սէղբեստրոս փափին եկաւ Հռոմ, և յաժմս եւ Ռ և Ը տարոյ եկեալ է առ ոտս սրբութեան իւրոյ առ ի ընկալնուլ զպատրիարքական փալեօն և զհաստատութիւնն պատրիարքութեան իւրոյ, երբ մինչև յաժմս առանց զէն ԼԹ տարի պատերազմեցաւ ընդդէմ հէրիտիկոսաց, և յաժմս զինուորեցեալ ի սրբութենէ իւրմէ դարցցէ ի յարևելս և այլն, և փափն յոժարութեամբ խոստացաւ կատարել զխնդիրս իւր հանդիսաւորապէս և առեալ զօրհնութիւնն նորա դարձաւ ի տուն մեծաւ մխիթարութեամբ։ Նւ եւ քանի աւուր նոյն պատրիարքն տկարացաւ . . . փափն լվաւ զտկարութիւնն իւր և եկ ի տեսանել զնա հանդերձ Բ կարտինալիւ, այսինքն պէլլուքան և քարաֆան. թէպէտ առապայշն վար չեկաւ, քան զի պատրիարքի բնակեալ օթևանն բարձր քոլով նեղութիւն էր և անյարմար փափին վեր ելանել, բայց կարտինալներն վեր ելան խաղրն հարցանել փափին կողմանէ. և փափն կես սահեթ եկեղեցնա առաջեւ առապառով կեցաւ և բովանդակ հայքն զոտն համբուրեցին. իսկոյն փափին և քանի կարտինալի հէքիմներն եկան առ ի բժշկել զնա։ Նտ քանի աւուր փոքր ինչ առողջացաւ և տօն ամէնիքօն ընդ իւր գնաց փափին շնորհակալութիւնս մատուցանել. նոյն խոսակցութեան մէջ տօն ամէնիքօն հասկացոյց սորայ չիքաւորութիւնն և փափն հրաման առաւ փարթ տան, քանի որ տեղս է և արապայ՝ երբ որ խնդրէ... անա մի ըստ միօջէ ըստ խոստման իմոյ ծանուցի գերյարգելութեան ձերում. եւս յայտ լեցի որ զատկէն եւոյ հասդատ միտն գրեր է վէնէտիկ գալու և անտի գնալ ի յարևելս. բայց Սահակ եպիսկոպոսն կամք չունի յարևելս դառնալ, կամի մնալ այս երկիրներն. և յաժմս լսեցի որ մին քուրտուստանցի նոր ուղղափառ եղած հայ եպիսկոպոս ոմն եկեր է ալիկուռնա տեղս գալու է, սա եւս վասն մնալու կուգայ եթէ իւրեան փառթ տան....։*

*Ամի տեառն* 1742 *հոկտ.ի* 6 — *Նուաստագոյն ծառայ*

*[ի Հռովմ]* — *[պատկերահան] Յոհաննէս*

## ՃԺԲ.

*Ծիրանաւորաց ժողովոյն* (Concistoro) *մէջ՝ Բենեդիկտոս ԺԴ. մեծ հանդէսով կը հաստատէ Աբրահամ Պետրոսի Պատրիարքական Իշխանութիւնը Կիլիկիոյ Աթոռոյն վրայ։*

*Մեր նամակագիրը խնամքով կու տայ մեզ ոչ միայն այդ կարևոր հանդիսին նկարագրութիւնը, այլ նաև պիտանի տեղեկութիւններ նախապատրաստական գործողութեանց մասին։*

*Գերյարգելի եւ գերապատուելի տեառնդ իմոյ որդիական սիրով ողջոյն*

*. . . Նտի գիրն որ գրեցի գերյարգելութեան ձերում, որով բազում ինչ ծանուցի Պետրոս կաթողիկոսին կողմանէ... ամսիս*[1] 26, *երկուշաբաթի, փափն քօնճիսթօռ առաւ.*

1. *Նոյեմբեր։*

նոյն քօնչիսթօրին մէջ առաջի 18 կարտինալաց մեծաւ հանդիսիւ հաստատեաց զՊատրիարգութիւնն նորին ի վերայ Կիլիկիոյ. եւ ամենայն Չէրիմոնիայի փափն և ամենայն քարտինալք կրկելով համբուրեցին զնա. եւռոյ Կարտինալ պէլլուքան նոյն օրն տալառ զնա ի սեղան իւր հանդերձ մօնսինեօր Ասիմանիւն որ ի մէջ քօնչիսդօրին վերոյ ասացեալ արարողութեանց թէրճիմանն էր. եւռոյ Աստուածածնայ ամենամաքուր յղացման օրն սանթա մարիայ մաճիօր եկեղեցին եւս հանդիսապէս պիտի ընկալնու փափէն զփաթրիարքական փալեօն. մին քանի օր առաջ վերոյ ասացեալ բաներուն, կարտինալ փէթրան սոյն Պատրիարքին վասն ուղղափառութեան զոր ինչ արարեալ և կրեալ է և այլ ամենայն իւր մէրիթօն[1] կարճորէն ըստամփայ անել[2] տվաւ և մատուցին կարտինալաց և այլ ոմանց. վերջապէս յայտ լիցի հրամանուցդ որ անունն տարածվեցաւ ի մէջ քաղաքիս, մինչ զի աւիզներով[3] ուրիշ երկիր ծանուցին...

Եւս յայտ առնեմ որ այս մոտ ժամանակս մարոնաց Պատրիարգն մեռաւ երկու ֆոքա (?) եղեն եպիսկոպոսքն, և արարին երկու Պատրիարք, երկուքն էլ էլչի առաքեր են Հռոմ. վասն հաստատութեան, սոյն ազգս ընդ ամէնն ԺԲ եպիսկոպոս ունին, արարին այսպիսի խռովութիւնս։ . . .

Ամի տեառն 1742
դէկտեմբերի ա։
[ի Հռովմ]

Խոնարհագոյն ծառայ
[պատկերահան] Յօհաննէս

# ՃԺԳ.

Քրիստոսի Ծննդեան առթիւ Մխիթարայ շնորհաւորագրոյն պատասխան մ'է հետեւեալը, որ միանգամայն կը ցուցնէ Կիլիկիոյ մեր Առաջին Դիտապետին տածած յարգանքն ու սէրը առ մեր Եր. Հիմնադիրը։

Ամենայարգելի եւ ամենգովելի եղբօրդ իմոյ Մխիթար աբբայհայր աստուածաբան վարդապետդ Ողջոյն

Առաջին և երկրորդ եհաս առ իս գիր, բայց ի տկարութեան և ի սպաղանաց ոչ կարացի գրել. ներեա վասն յիսուսի. իսկ վասն աւետեաց մեծի ծննդեան Էմանուէլի, յոյժ շնորհակալ եմ։ Խնդրեմ յիսուսէ որ ծնաւ ի սուրբ Կուսէ, միշտ ծնցի ի մաքրագոյն սրտի քոյ և քոյայնոցն։ Իսկ ի մտանել նոր տարոյն, պէսպէս պահպանիչ և գործադրիչ նոր շնորհօք զարդարեսցէ. միշտ առ միշտ ամէն։ Բազում բանք գոն խոսիլ ընդ Վերապատուելի եղբայրութեան քում, կրկին ոչ յունիմ ժամանակ. եթէ կամի աստուած բերան առ բերան խօսիլ, յայնժամ լնանի փափաք և իղձ սրտիս։ Խնդրեմ զի ծանուցես երէմիեա վարդապետին չուտով յղեսցէ իւր եղբօր որդին, եթէ հաճի ինքն բերցէ. զի յետ իմոյ ելանելոյ ոչ կարէ մտանել մանուկն ի Դպրատուն. իսկ յաժմ աստուծով աներկբայ մտանէ վաղեմի սիր[ել]ին իմ պարոն յովանէսն. աղաչայ պետրոսն, համեստ ընկ[եր]աւն և նիբօթիւն[4], և եւս մերայինքն զսուրբ աջդ համբուրեն։ Վերջեմ զբանս ժտելով յատուկ յիշել զտառապեալս ի սուրբ յաղօթս որպէս զմի ի թշնամեաց. ողջ լեր ի փարծանս սրբոյ եկեղեցոյ. Ամէն

Պատրաստ ծառայ
Ամենապատուելի Եղբայրութեանդ
Նուաստ
Պետրոս կաթողիկոս Հայոց
Հաստատեալ ի սրբոյ Գահէն

1742
Դեկտեմբերի 22
[ի Հռովմ]

1. Արժանիք, արդիւնք։ — 2. Տպագրել։ — 3. Ծանուցագիր։ — 4. Թոռն։

digitised by A.R.A.R.@

## ՃԺԴ.

*Թէ՛ լեզուին և թէ պարունակուած այլազան նիւթերուն համար շահեկանութիւն մ'ունի հետեւեալ վաւերագիրը։*

*Խորագրին մէջ նամակագիրը կը ստորագրէ լոկ Պետրոս, սակայն մենք թուղթին տակ կը նշանակենք Աղաչայ Պետրոս, ցուցնելու համար որ նախընթաց մէկ քանի նամակներու մէջ յիշուած անձն է։*

*Օրհնեալ եղիցի Յիսուս Քրիստոս.* 1742. *դեկտեմ.* 22. *ի մեծն Հռոմայէ*

*Գեր Ցարգել Հօրն մերոյ հայրաբբային. և ամենայն միաբանից խոնարհական սիրոյ ողջուն. անարժան ծառայէս պետրոսէն*

*. . . Վեհայլուստ կաթողիկոսն մեր, որ մեծ շատ առժանաւոր մարդ է, ոչ կասիմ առաւել քանծ զգերայբարձրութիւնս. ալ թէ ընդ կալքաւորաց մեր հայոց. շատ զօվի և խոնար ու պարկեշտ մարդ մէկ. և շատ գուհ է և զօվասանութեամբ է ամենից մեծաւորաց և կարգաւորաց. նայև ինքն նմանայպէս շատ գուհ է ի վերայ գերյարգելութեանս և շատ մեծ սէր ունի գալու և տեսնելու զգերյարգելութիւնս և միշտ ուրախ է ի վերայ ձեր ամենից միաբանից։ Եւ ամենայն ժամ կու հիշէ զհրամանքներդ. դարձեալ հօս մեծ սիրով ըզսայ կի ընդունէ սրբազան փափն և ամենայն կարտինալք որ և ես մեղաւորս ալ երկու անգամ մինչև ցաժմ էղիլ իմ փափին տունը և զոտն համբուրիլ իմ միջնորդութեամբ Վեհայլուսդ կաթուղիկոսին. և հետն միայտեղ էղիլ իմ փափին մօտ. նայև հարկ եղև որ խօսիմ հետ սրբազան փափին լադիննակն, ծուղումուն որպէս գիտաձայ. վերչայպէս օրհնութիւն երկու անգամ և եդ զձեռն գլխուս և զոտն համբուրեցի քանիցս անգամ և փառօք ուրախութեամբ ելինք և փափին կառօքն զմեզ մեր օթևան բերին. և զայս ես ասաց սրբազան փափն թէ ուրախ է և ունի շատ սէր ի վերայ մեր ողորմելի ազգին . . .։*

[*Աղաչայ Պետրոս*]

P. S. *Պի գրիմ քիչ մը նոր խապար Գեր Ցարգելութեանս. թէօր սուտ չիլայ նայ առաջին ըզլաւ խապարն. այսինքն թէ բրինձ. Լուբզօվիձը. ես գիտեմ զինքըն. նայ կասին թէ շատ հախթութիւն արած ըլայ և գտնըված ըլլայ ֆրանձուզնուն մօտ են զամենայն զահարան, որն օր կամեցած էղիլ ին բէրէլու Բրական, այսինքն սաքսոնին երկրօմը, և կասին թէ* 2 *միլիոն դալէր գնաըվիլ է օր ամէն մէկ զօլտատղին երկ երկու հազար զօլօթայ փայ է էկիլ է ու անկի դուս անչափ ալուր և գարի և ամենայն ցեղ բանը նայև զգանձ ալ կորած ըլան. կարծիմ թէ հոտ այլ լաւ պի լսվի և այլն։*

*Եւ երկուսում խապարն մեր երկրէն կուգրին թէ բռուշիեային երկիրն, այսինքն պրանտայուրին հրամանին տակն կէցօղ ժօղօվուրդն գաղցած ըլան Լուդրան և Գալվին.* 10000, *այսինքն ժՌ. հօգի և* 600 *գահանայ և Ա գանօնիքն. ու գանօնիքն զարաս զարգվիլ է և մեծ թաքաւորի դուստր առիլ է, զի ինքն ալ մեծ մարդ էղիլ է և մեծ տանէ. չիտիմ թէ խորդ թէ սուտ. աստուած տայ որ սուտ ըլայ, մայ նիշանները սուտի չին. աստուած պէթառէն պահէ. զիմ ահս ազ իձէր և աս է միչդ աստուած խզն բարին անէ. ամէն. բաւէ։*

*Շարունակելի*

Հ. ՂԵՒՈՆԴ ՏԱՅԵԱՆ

**ԿԱՐԵՒՈՐ** *Մեր խմբագրականի առաջին, վրայ էջին ը սխալմամբ, տող երկրորդին մէջ* 175.*ը ուղղելի է* 224. (Հ. Դ. Յ.)

digitised by A.R.A.R.@